


ԱՄՍԱԳԻՐ

ԳՐԱԿԱՆ · — ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ · — ՊԱՏՄԱԿԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ԵՒ ԳԻՏԱԿԱՆ

1843-1897 ՀԱՏՈՐ ԾԵ ՄԱՅԻՍ

## ԲԵՒԵՌԱԳԻՐ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹԻՒՆՔ

### ՌՈՒՍԱՑ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

(Շար. տես էջ 157)

### ԳԼՈՒԽ Ա.

### ԴԱՇՊՈՒՌՈՒՆ

(Luḫiunini-Menuaḫinili)

ՎԱՆԻ *թագաւորներից առաջինը, որ մտել էր Երասխի հովիտը և թողել այնտեղ իւր աշխարհակալութեանց կոթողներն, Մենուա էր*[1] *Իշպուինի որդին, որ ապրում էր Ը դարի սկզբում նախ քան զՔրիստոս. յառաջ քան այս հիւսիսային աշխարհը միջամուխ լինելն և ամուր ոտքով այն տեղ հաստատուիլն, նա պիտի նուաճէր Վանի և Երասխի հովտի մէջ եղած երկիրները: Գուշ-Թէփէի արձանագրութիւնից*[2] *երևում է, որ Մենուան իւր իշխանութեան տակ նուաճեց Մանանի երկիրը, որ Վանի արևմտեան կողմումն էր գտնւում, Ուրմիա լճի մօտ և տարածւում էր հեռու հիւսիս դէպ ի Երասխը Մանանի երկիրը. և Մաննէացւոց ժողովուր-*

1. *Այս անունը մեզ յիշեցնում է Մ. Խորենացու պատմութեան Մանաւազն.*

*Ծան. Թարգ:*

2. *Գտնել է Վ. Բէրկը Ուրմիա լճի հարաւային ափերում:*